Հաշվետվություն
2019 թվականի հոկտեմբերի 21-23-ը Սլովակիայի Հանրապետություն (Բրատիսլավա) գործուղման արդյունքների մասին

1. **Գործուղվողի անունը, ազգանունը.**
Էլեոնորա Վիրապյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
Սլովակիայի Հանրապետություն (Բրատիսլավա) 2019 թվականի հոկտեմբերի 21-ից-23-ը

4. **Հրավիրող կողմը.**
«Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն» (ԵԱՀԿ) Վիեննայի գրասենյակ և Եորոպական Միություն:

5. **Գործուղման նպատակը.**
Մասնակցություն մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային համակարգողների և զեկուցողների հավաքին:

6. **Քննարկված թեմաները.**
Ստանձնած պարտավորությունների և ԵԱՀԿ հանձնարարականների կատարմանն ուղղված համատեղ գործողությունների մշակում՝ ԵԱՀԿ տարածաշրջանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հետ կապված ընթացիք խնդիրները լուծելու համար:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
Հանդիպման հիմնական թեման էր «Մարդկանց թրաֆիքինգից և շահագործումից տուժած երեխաների պաշտպանություն. անցում պարտավորություններից դեպի

երեխայի կարիքներից և լավագույն շահից բխող օգնության ապահովում»: Հանդիպմանը մասնակցեցին Եվրոպայի և ԱՊՀ պետությունների ներկայացուցիչներ:

Համաժողովի առաջին օրը ներկայացվեցին գործող մեխանիզմների շրջանակում երեխաների պաշտպանության ուղղությամբ ԵԱՀԿ նախարարների Խորհրդի վերջին որոշումները և հանձնարարականները, խոսվեց այդ բնագավառում պայքարի կազմակերպման տեխնոլոգիաների և առկա ռեսուրսների մասին, քննարկվեցին հեռանկարները և հնարավոր հետագա քայլերը ազգային մակարդակում: Դրան հաջորդեց թրաֆիքինգի համար նպաստավոր պայմանների վերացման և պահանջարկի կրճատման հետ կապված հարցի քննարկումը, որի շրջանակում խոսվեց հակազդման միջոցների, մատակարարման շղթաներում թրաֆիքինգի կանխմանն ուղղված պետությունների քայլերի, աշխատանքի տեղավորման էթիկական նորմերի, երեխայի լավագույն շահի մասին: Վերջինի կապակցությամբ քննարկվեց երեխային՝ իր իսկ ցանկությամբ ընտանիք վերադրաձնելու հարցը և դրա արդյունքում առաջացող վտանգները:

Երկրորդ օրը անդրադարձ կատարվեց թրաֆիքինգի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության դերին և այդ համատեքստում օգնության կազմակերպման և ընդհանրապես համագործակցության հարցերին: Մասնակիցները բաժանվեցին խմբերի և քննարկեցին՝ յուրաքանչյուրն իր խմբում, քաղաքականության մշակման, երևույթի կանխարգելման, զոհերի նույնացման և աջակցության, այդ թվում՝ քրեադատավարության ընթացքում, խնդիրներին: Մասնակիցները ներկայացրեցին նաև իրենց երկրների փորձը, գործող կառուցակարգերը, ծրագրերը: Իմ կողմից ներկայացվեց Հայաստանում գործող զոհերի նույնացման համակարգը:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել, սակայն մասնակիցների համար կազմակերպած քննարկում-վարժության արդյունքում նախանշվեցին ապագա ռազմավարության ուղղությունները տարածաշրջանում: Շեշտվեց նման ձևաչափով հանդիպումների կարևորությունը և այդ կապակցությամբ առաջիկայում նախատեսվող միջոցառումը, որի մասնակիցներն են լինելու դատավորները: Ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ քրեական գործերը դատարան չեն հասնում, համապատասխան որոշումների թիվը փոքր է և անհրաժեշտ է հասկանալ պատճառները, առավել ևս, որ այս միտումը բնորոշ է գրեթե բոլոր երկրների համար:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Որոշվեց, որ քննարկումների արդյունքները կամփոփվեն ԵԱՀԿ կողմից, և դրա հիման վրա կմշավեն առաջարկություններ՝ ուղղված, մասնավորապես, թրաֆիքինգի ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության համակարգի հզորացմանը:

10.Ստորագրությունը, ամսաթիվը.

28.10.2019թ.